Ուղեցույց

Մայրենի /Ընթերցանություն/ առարկայի օլիմպիադայի ստուգման

1. Օլիմպիադայի դպրոցական փուլի մասնակիցների կատարած աշխատանքները ստուգելու համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են դպրոցի «Մայրենի», «Հայոց լեզու և գրականություն» առարկաների ուսուցիչներ:
2. Ստուգող հանձնաժողովը դպրոցական փուլի աշխատանքներն սկսում է ժամը 15:00-ից:
3. Յուրաքանչյուր դասարանի առաջադրանքը գնահատվում է 50 միավորանոց սանդղակով հետևյալ կարգով.

Առաջադրանքներ՝

- **1-13**

Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը/քայլը՝ 1 միավոր:

- **14-19**

Տվյալ առաջադրանքների համար առավելագույն 5 միավորը տրվում է հետևյալ դեպքերում.
ա) Միտքը ձևակերպված է հստակ, բխում է տեքստի բովանդակությունից:
բ) Ապահովված են պատկերավոր խոսքն ու ստեղծագործական մոտեցումը:
գ) Շարադրանքը գրագետ է. բացակայում են ուղղագրական և այլ կարգի սխալները:

- ✓ Ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 միավոր:
- ✓ Հարակից յուրաքանչյուր սխալի համար հանվում է 0,2 միավոր:
- ✓ Կետադրական սխալների համար հանվում է 0,5 միավոր, եթե դրանք վերաբերում են վերջակետի և կոչականի կետադրության դեպքերին: Մնացած դեպքերում միավոր չի հանվում:

- **20**

1 միավոր տրվում է դիպուկ ու պատկերավոր վերնագրի համար:

4. Հանձնաժողովը յուրաքանչյուր մասնակցի տվյալները և գումարային միավորը լրացնում է ըստ Հավելված 1-ի, որը տրված է Excel ֆայլով /կից ներկայացվում է/:
Excel-ի ֆայլը լրացնելիս օգտվել օլիմպիադաների կայքերի հետևյալ հղումներից՝ https://olymp.am/hy/node/1352 կամ https://lib.armedu.am/article/33247 և տվյալները գրել նույնությամբ: Հատկապես ուշադրություն դարձնել ***դասարան*** */գրել բացառապես արաբական թվանշաններով, չգրել հռոմեական/ և* ***կրթօջախ*** */լրացնել նույնությամբ, կարճ տարբերակով/ սյունակներում լրացման ձևին:*
5. Դպրոցի տնօրենը լրացված աղյուսակը էլեկտրոնային եղ անակով հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է մարզպետարան /Երևանի քաղաքապետարան/:
6. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի /Երևանի քաղաքապետարանի/ վարչությունը դպրոցներից ստացված աղյուսակները ներբեռնում է մեկ Excel ֆայլում և չորս աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է ՀՀ ԿԳՄՄՆ՝ info@olymp.am էլեկտրոնային հասցեով: